ԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ԴՈՆ ԿԻԽՈՏՆ ԻԲՐԵՎ ԻՍՊԱՆԱԿԱՆ ՈԳՈՒ ԿԵՐՊԱՐԱՆԱՎՈՐՈՒՄ՝ ԸՍՏ ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՈՅԻ

19-րդ դարում «Դոն Կիխոտ» վեպը մտնում է համաշխարհային գրականություն: Այս ժամանակաշրջանում Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Ռուսաստանում ստեղծվեցին Դոն Կիխոտի տարբեր փիլիսոփայական, հրապարակախոսական մեկնաբանությունները:

Սակայն Սերվանտեսի հայրենիքում՝ Իսպանիայում, համաստեղծագործությունը Սերվանտեսի հետ գրեթե չի կայանում:

«Երբ սկսվեց գերմանական ռոմանտիկների մեծագործական գործունեությունը,- գրում է Վ. Բագնոն,- և Սերվանտեսը ճանաչվեց հանճարեղ(եթե ոչ առաջին գրող), իսկ վեպը՝ երկրագնդի վրա մարդու տեղի և դերի գաղափարական առանցք, Իսպանիայում Դոն Կիխոտ կերպարի մեջ բարեհաջող կերպով շարունակում էին տեսնել ազդեցիկ միջոց խելքի և սրտի մոլորության դեմ, իսկ նրա հեղինակի մեջ՝ մի գրողի, որն արժանի է ուշադրության նոր ժամանակներում»[1]:

Իսպանացիները միակողմանի էին դիտում սերվանտեսյան հերոսին և իրենց հետազոտություններում հենվում էին հիմնականում սոցիոլոգիական և հոգեբուժական մեթոդների վրա:

«98-ի սերունդ» գաղափարական հոսանքը իսպանական մշակույթի պատմության ամենահետաքրքիր երևույթներից մեկն է, որն իր անվանումը ստացել է իսպանաամերիկյան պատերազմի կապակցությամբ: Այն ավարտվեց1898 թվականին՝ տնտեսապես հետամնաց Իսպանիայի խայտառակ պարտությամբ, որի հետևանքով էլ նա կորցրեց իր գաղութները:

«98-ի սերնդի» ներկայացուցիչներ Միգել դե Ունամունոն՝ հոսանքի գաղափարական և հոգևոր առաջնորդը, Գանիվետը, Ասորինը, Մաչադոն հեղաշրջում կատարեցին իսպանական գրականության մեջ: Հենց այս գրական ուղղությանն է պատկանում սերվանտեսյան վեպի երկրորդ հայտնաբերման պատիվը: Այս հեղինակների մոտ «Դոն Կիխոտ» վեպը ձեռք է բերում ազգային խնդրի ձևավորման արժեք: Դոն Կիխոտի մասին խորհելիս՝ «98-ի սերնդի» ներկայացուցիչները, մտորում են Իսպանիայի ծանր կյանքի, պատվի, ազգային արժանապատվության մասին, որոնք համարվում են իսպանական ազգային գծեր և թույլ չեն տալիս իսպանական ժողովրդին հպատակվել այլ ազգերի:

[1] Багно В.Е, Дорогами "Дон Кихота", М., 1988,с.255.

«Դոն Կիխոտը,- գրում է Ի.Տերտերյանը,- դարձել էր եզրույթ, հասկացություն, որը գլխավորն ու ամենագործածականն էր այն լեզվում , որով խոսում էին միմյանց և ընթերցողի հետ այս ժամանակաշրջանի մտածողներն ու գրողները»[2]:

«98-ի սերնդի» հեղինակների մոտ Դ.Կիխոտի մեկնաբանությունները հաճախ հոգեբանական են և սրանք հետաքրքիր են հենց այն պատճառով, որ փորձում են պատասխանել ժամանակակից իսպանացու առջև ծառացած խնդիրներին: Գեղարվեստական կերպարը՝Դոն Կիխոտը, անջատվում է ստեղծագործությունից և հեղինակից և դիտարկվում անկախ: Ամեն ոք յուրովի է բացահայտում, մեկնաբանում Կիխոտի կերպարը՝ ըստ իրեն հուզող հոգևոր խնդիրների:

1896 թվականին Միգել դե Ունամունոն առաջին անգամ անդրադառնում է Սերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպին՝ գրելով. «Տխուր Պատկերի Ասպետը» էսսեն: Այստեղ Մ.Ունամունոն հրավիրում է ընթերցողին մտորել Դ.Կիխոտի խորհրդանշական կերպարի շուրջ՝ իբրև իսպանական ժողովրդի խորհրդանիշ: Այն իրականության կոնկրետ իրականացում է, և որքան իդեալական է այս կերպարը, այնքան՝ ռեալ: Մ.Ունամունոն մանրամասնորեն ուսումնասիրել է վեպը և դուրս է գրել 17 հատված, որոնցում նկարագրված է Դոն Կիխոտի կերպարը:

Մ.Ունամունոն այս էսսեում խոսում է ճշմարտության մասին. «Իսկ ՞ինչ է ճշմարտությունը,- գրում է Ունամունոն,- ՞ինչն է այստեղ ճշմարիտը և ՞ինչում է նրա ուժը: Ճշմարտությունը կոնկրետ փաստ է, ամեն ինչ պարփակող, առեղծվածային և ունիվերսալ, որն իր արմատներով տանում է դեպի հրաշքներ: Արարքները, վերածվելով մանրուքների, վերլուծության և դիահատման ժամանակ դառնում են փոշի, փաստեր, և վերանում է կենդանի իրականությունը: Դ.Կիխոտի ճշմարտության ուժը նրա մարդկային և կաստիլիական հոգում է, և ճշմարտությունը հայտնաբերվում է նրա դեմքին, որտեղ արտացոլվում է հոգին»[3]: Մյուս հարցումն այն է, թե արդյ՞ոք մենք պետք է տարանջատենք Դոն Կիխոտի հոգին արտաքինից, կամ արտաքինը հոգուց: Հեղինակը համակարծիք է հենց Դ.Կիխոտի հետ, որը պնդում է, որ մարդկային բնավորության և արարքների հիման վրա կարելի է որոշել այդ մարդու դիմագծերը, մաշկի գույնը և հասակը: Դոն Կիխոտի համար ճշմարիտը իր կաստիլիական փիլիսոփայությունն էր, այն իրականությունը, որի շնորհիվ սխրագործություններից կարելի է որոշել դիմագծերը, արտաքինից՝ հասնել ներքինին:

Ըստ հեղինակի, Դոն Կիխոտին պատկերել ցանկացող նկարիչը պետք է առաջին հերթին բացահայտի Կիխոտի հոգին, ոգեշնչվի նրա սխրագործու-

---

[2] Тертерян И.А. Испытание историей: Очерки испанской литературы 20-го века, М., 1973, с.22.

[3] М.де Унамуно, Рыцарь Печального Образа, стр.233/Житие Дон Кихота и Санчо по Мигелю де Сервантесу Сааведре, объясненное и коментированное Мигелем де Унамуно, изд."Наука", Санкт-Петербург, 2002г.

թյուններով, վեհությամբ, որով ճանապարհ գտնի իր հոգուց դեպի Կիխոտի հոգին: Սակայն սրա համար անհրաժեշտ է, որ նկարիչը հոգու խորքում Դոն Կրխոտ լինի:

Ինչպես գրում է Ունամունոն. «Դ.Կիխոտին պատկերել առանց նրան այլանդակելու՝ նշանակում է տալ նրա հոգուն մարմին, որի միջով կարծես նշմարվում է այդ հոգին և կրում Ասպետի անհատականություն: Սա նշանակում է գեղանկարչության մեջ հասնել սիմվոլիկության՝ լի մեծագույն էքսպրեսիայով և ուժով, այսինքն՝ ստեղծել մարդ-սիմվոլի կերպար, որի համար պետք է փնտրել լամանչացի հիդալգոյի հոգին ոչ միայն Սիդ Ամեդի անմահ էջերում, այլ նաև նրանցից դուրս»[4]: Կիխոտը ապրում է ոչԲ միայն Սերվանտեսի վեպի էջերում, և իսպանացի նկարիչը կարող է նրա կերպարանավորումը գտնել իր իսկ հոգու խորքերում, եթե փնտրի սիրով, ամեն անգամ ավելի խորը ներթափանցելով:

Ունամունոն կոչ է անում բոլորին ընկղմվել սեփական հոգու խորքերը, փորձել գտնել այնտեղ «Դոն Կիխոտին», որն ապրում է ցանկացած մարդու մեջ:Հեղինակը պնդում է, որ ցանկացած ոք կարող է նաև ստեղծել Դոն Կիխոտի կերպարը, եթե ներթափանցի իր հոգու խորքերը, ուսումնասիրի իր էությունը, և պարտադիր չէ, որ դա անի միայն նկարիչը: Ցանկացած մարդ, ով ի զորու է ուսումնասիրել իր հոգին, ով հարցեր է տալիս ինքն իրեն ու փորձում պատասխանել, ով համարձակվում է հիշել իր ով լինելը, կարող է ստեղծել Դոն Կիխոտի նկարը իր հոգում:Միայն թե դա անելու համար մարդը պետք է զինվի համբերությամբ և լինի ուշադիր:Ասվածից կարելի է հետևություն անել, որ Ունամունոն կոչ է անում արվեստագետներին (և ոչ միայն նրանց) լինել ռեֆլեքսիվ, որը դժբախտաբար մեծամասամբ բացակայում է նաև մեր օրերում: Ունամունոյի ցանկացած դիտարկում , քննադատություն ինքնին վկայում է այս կամ այն երևույթի բացակայությունը:

Շատ մարդիկ ապրում են այն թյուր համոզմունքով, որ Կիխոտը երբևիցե գոյություն չի ունեցել, և Ունամունոն անհրաժեշտ է համարում ապացուցել մարդկանց, որ աշխարհում գոյություն ունեցել են թափառական ասպետներ: Թափառական Ասպետի կերպարի մեջ Ունամունոն տեսնում է արդարությունը պաշտպանողի, ճշմարտությունը վերականգնողի, և այս իսկ պատճառով նա ամեն գնով ուզում և փորձում է ապացուցել Դոն Կիխոտի իրական գոյությունը, ով ներառել է իր մեջ թափառական ասպետի բոլոր դրական գծերը, և որին կարելի է համարել թափառական ասպետի իդեալ: Այստեղ նույնպես Դոն Կիխոտի մասին մտորելու ընթացքում Ունամունոն բարձրացնում է ևս կարևոր մի հարց, այն է՝ ճշմարտություն և ճշմարտության վերականգնողի խնդիրը: Արդի փուլում, երբ աշխարհի պատկերը դարձել է պրյուրալիստական, չկա

---

[4] Նույն տեղում, էջ 234:

երևույթի միասնական, ամբողջական պատկերացում , ուստի ճշմարտությունը կորցրել է իր «դեմքը», իսկ ճշմարտության վերականգնողը կարող է դառնալ ուտոպիստական կերպար, լինել ծաղրի առարկա, հայտնվել ծիծաղելի իրավիճակներում:

Ունամունոն համոզված է, որ ժողովուրդը պետք է օրինակ վերցնի իր իսկ լեգենդների, միֆերի, վեպերի հերոսներից: Նա տարբերություն չի դնում սրանց միջև և կարծում է, որ ցանկացած հերոս օրինակ կարող է ծառայել իր ժողովրդի համար, նույնիսկ մտացածին հերոսը, ինչպիսին է Դոն Կիխոտը:

«Գիտությունը, որն ամեն ինչ ենթարկում է ուսումնասիրության,- գրում է Ունամունոն,- սպանում է կյանքը և նրա հետ նաև ճշմարտությունը, որում միահյուսվում են լեգենդն ու պատմությունը, երբ մխրճում է հերձադանակը կենդանի հյուսվածքի մեջ, կամ երբ փորձում է սահմաններ դնել լեգենդի ու պատմության միջև մի կողմից, մյուս կողմից՝ վեպի, միֆի և այլաբանության միջև: Այդժամ կյանքի հետ վերանում է նաև ճշմարտությունը և մնում է լոկ ճշմարտանմանությունը: Միայն սպանելով կյանքը(իսկ նրա հետ նաև ճշմարտությունը), կարելի է առանձնացնել պատմական հերոսին վեպի, միֆի, հեքիաթի, լեգենդի հերոսից և հաստատել, որ ինչ-որ մեկը հաստատ գոյություն է ունեցել, մյուսը՝ կիսով չափ, իսկ երրորդը՝ ոչ»[5]: Սակայն ըստ հեղինակի, գոյություն ունենալ նշանակում է ապրել, և ով գործում է՝ գոյություն ունի: Իսկ եթե գոյություն ունենալ նշանակում է գործել, ապա Դոն Կիխոտը գոյություն է ունեցել, քանզի նա գործում է մեր հոգիներում նույնքան եռանդուն, որքան պատմական հերոսները՝ իրականությունում: Դոն Կիխոտը կենդանի է, քանի որ ապրում է այն մարդկանց մեջ, ովքեր ընթերցել են այս վեպը: Դոն Կիխոտը առիթ է տալիս մտածելու շատ կարևոր բաների մասին: Եվ եթե մարդիկ վեպի ընթերցումից հետո մի փոքր «կիխոտանում են», ուրեմն Կիխոտը գործում է, նշանակում է գոյություն ունի: Երբ ընթերցում ես, «անիրականը»՝ գրական կերպարը, դառնում է «իրական»:Իսկ երբ իրական է դառնում , ուրեմն ճշմարիտ է: Այստեղ Ունամունոն բարձրացնում է ռեցեպտիվ գեղագիտության կարևոր հարցադրումներից մեկը՝տեքստ – ընթերցող փոխհարաբերությունը:

Ապագա հերոսը սկզբում ծնվում է ժողովրդի հոգում և հետո լույս աշխարհ է գալիս: Ժողովրդի հոգին խմորում է նրան իր հոգում:Եթե Սերվանտեսը ստեղծել է Դոն Կիխոտին, ապա իսպանացի ժողովրդի մեջ կար այն սերմը, որը ծնունդ է տվել այս հերոսին: Ունամունոն գտնում է, որ կերպարը ծնվում է ժողովրդի ծոցից: Մյուս կողմից հեղինակ - Սերվանտեսը մեդիում է, նա միջոց է դառնում ազգային ինքնությունը պարզելու, բացահայտելու առումով:

Ամեն մի ժամանակաշրջանում երևան է գալիս մի հերոս, որն անհրաժեշտ է տվյալ պահին: Սա հասկանալի է, քանի որ այդ հերոսը ներառում է իր

---

[5] Նույն տեղում, էջ 234:

ժամանակի գաղափարները, որի միջոցով հեղինակը զգում է իր ժամանակի պահանջները:

«Հերոսը ժողովրդի անհատականացված կոլեկտիվ հոգին է, նրա սիրտը բաբախում է համահունչ ժողովրդի սրտին, բայց նրա զգացողությունները ավելի սուբյեկտիվ են: Սա ժողովրդի նախատիպն է և նրա կերպարանավորումը, ժողովրդի հոգևոր էությունը: Եվ չի կարելի ասել, թե հերոսը իր ետևից է տանում ժողովրդին, ոչ, հերոսը ժողովրդի գիտակցությունն է, նրա ձգտումների բառային արտահայտումը»[6]: Հատվածից երևում է, որ Ունամունոն մեծ տեղ է հատկացնում արվեստին, գրականությանը, որտեղ կերպարը առաջ է ընկնում ժողովրդից, դառնում է ուղեղիչ: Այժմյան փուլում գրականությունը, գրական կերպարը կորցրել է իր ուժը, որովհետև չի ընթերցվում, մարդկային զանգվածների հետաքրքրությունից դուրս է: Կերպարը ուժ է, ազգային ինքնության խտացումն է, այն մնում է գեղարվեստական տեքստի շրջանակներում՝ ստանալով պրակտիկ կիրառություն:

«Հաճախ հերոսը,- շարունակում է Ունամունոն,- որի լուսավոր ծնունդը նախազգում են, շատ վսեմ է, որպեսզի հանդես գա մարդու տեսքով, երբեմն էլ հասարակությունն է չափազանց սահմանափակ նրան ընդունելու համար: Եվ այդ ժամանակ ծնվում է իդեալ՝ առասպելական, կամ գրքային, որին ծնունդ է տալիս տղամարդու երևակայությունը»[7]: Այս հերոսները ոչ պակաս իրական են, քան մսից և արյունից կազմված հերոսները: Մ.Ունամունոն համեմատում է Կիխոտին Ֆրանսիսկո Պիսարրոյի, Էռնան Կորտեսի[8], անգամ Սուրբ Դիեգո Մատամորոսի[9] հետ: Սերվանտեսի հերոսին հավասարեցնելով պատմական դեմքերին՝ հեղինակը ևս մի անգամ ընդգծում է, որ կարևոր չէ, թե ինչ հերոս է, կարևորն այն ազդեցությունն է, որով նա ներգործում է ժողովրդի վրա, ինչ օրինակ է նա տալիս մարդկանց, ինչին է նա ծառայում, ինչ իդեալների կրող է:

«Գործել նշանակում է գոյություն ունենալ,- գրում է Ունամունոն,- իսկ որքան մարդիկ, որոնք իրականում գոյություն ունեն, գտնվում են այսօրվա նեղ շրջանակներում, ստեղծում են ավելի քիչ բան, քան խենթացած Ալոնսո Կիխանո Բարին»[10]: Ահա թե ինչի մասին է մտորում Միգել դե Ունամունոն այս էսսեում: Նա ցանկանում է ցույց տալ, որ մարդը՝ մսից ու արյունից, անպայման պետք է հիշի իր ժողովրդի փառավոր անցյալը, պետք է ոգեշնչվի իր լեգենդների, առասպելների, վեպերի հերոսներից, և ոչ միայն, այլև իրական պատմական հերոսներից, որպեսզի կերտի իր ներկան և ապագան, գործի, այլ ոչ թե հանձնվի հոսանքին, պայքարի և ձգտի հաղթանակի: Ավելին՝ հայացքն

---

[6] Նույն տեղում, էջ 235:
[7] Նույն տեղում, էջ 235:
[8] Ֆրանսիսկո Պիսարրո, Էռնան Կորտես՝ հայտնի կոնկիստադորներ:
[9] Իսպանիայի հովանավոր սուրբ. Matamoros բառացի նշանակում է արաբներին սպանող:
[10] Նույն տեղում, էջ234:

անցյալին՝ հնարավորություն է տալիս գիտակցել ներկան, դարձնել այն ավելի իմաստալից, իմաստավորված, որով հնարավոր կլինի կերտել ապագան: Սա է ազգային ինքնության ձևավորման մոդելը: Մեր կյանքում գերզգայուն կերպով հայացքը ուղղվում է դեպի անցյալ, որը հնարավորություն չի տալիս իմաստավորել ներկան, ներկա վիճակը: Բացի այդ չկա քննադատական վերաբերմունք անցյալի նկատմամբ: Սրա բացակայության դեպքում անցյալը չի վերաիմաստավորվում, թարմացվում, չի ստանում նոր տեսք՝ արդի պահանջները բավարարելու համար: Երբ մենք ունենանք այս մոտեցումը անմիջական կդառնա ներկա- անցյալ կապը, որով դյուրին կլինի կերտել ապագան: Անցյալը- ներկան - ապագան կազմում են հավերժը, իսկ հավերժը ճշմարիտ է:

Ունամունոն պնդում է, որ Կիխոտից ավելի շատ բան է մնացել, քան կմնա մեզանից հետո, չնայած այն բանի, որ մենք միս ու արյունից ենք, իսկ նա՝ ոչ, քանի որ նա համարձակվել էր պայքարել ընդունված կանոնների դեմ, իր խղճի համաձայն:

«Այս անցողիկ ու պատահական աշխարհում,- շարունակում է Ունամունոն,- մեր ոգին անհրաժեշտաբար և մշտական արարում է: Սրանում է մեծագույն իրականությունը. ամբողջ պատմությունը իդեալականացում է հանուն իդեալի գոյության»[11]: Հենց իսպանական ժողովրդի ոգին է, որ ստեղծել է Դոն Կիխոտին, իր որդիներից մեկի՝ Սերվանտեսի միջոցով: Եվ այժմ Դոն Կիխոտը իրեն ստեղծած ոգու արտահայտությունն է:

Լեգենդի և գրքի հերոսը՝ պատմական դեմքի նման, կարող է ստանալ ժողովրդի հոգու կերպարանավորում: Այսպիսի հերոսները գործում են, հետևաբար գոյություն ունեն: Կաստիլիական հոգին ծնունդ է տվել Դոն Կիխոտին, որը կենդանի է ինչպես այդ հոգին:

Կիխոտի կերպարի մեջ Ունամունոն տեսնում է իսպանացու հոգին և Կիխոտի տխրության մեջ՝ պայքարող ազգի տխրությունը, որը հնազանդ է իր ճակատագրին: Կիխոտը փորձում է կոտրել Աստծո մտրակը՝ նրա ձեռքը համբուրելով:

Դոն Կիխոտի լավատեսությունը մանկական չէ, ոչ էլ ծերունական հոռետեսություն, այլ տխրություն՝ լի առողջ հնազանդությամբ և կենսական պարզությամբ: Ունամունոն գրում է.« ոգին՝ աշխարհ թափանցելուն զուգընթաց, հարստանում է նրանով: Հոգին և աշխարհը միահյուսվում և ձևավորում են իրար, իսկ մարմինը՝ ավելի ու ավելի է դառնում ոչ թե հանդերձանք, այլ ոգու արտահայտություն: Գուցե գա մի օր, երբ ամենահիանալի մարմինը դառնա ամենասքանչելի հոգու շտեմարան»[12]:Ասվածից երևում է, որ Ունամունոն ցանկանում է տեսնել իր ժողովրդին գերազանց վիճակում:Նա երազում և հավատում է, որ

---

[11] Նույն տեղում, էջ 235:
[12] Նույն տեղում, էջ 239:

կգա մի օր, երբ իսպանական ազգային ոգին, որի կերպարանավորումն է Դոն Կիխոտը, կձուլվի ժողովրդի հետ: Գուցե այդ ժամանակ մարմին-Իսպանիան դառնա ոգի-Դոն Կիխոտի շտեմարանը:

«Դիմագծերը, գրում է հեղինակը,- հավանաբար անցնում են ժառանգաբար: Երկարատև տառապանքը իր հետքն է թողնում դեմքի վրա, առաքինությունները զարդարում են այն, իսկ արատները՝ այլանդակում: Միջավայրին հարմարվելուն զուգընթաց, մարդու դեմքը ավելի ու ավելի է դառնում հոգու հայելի, քանզի դեմքը, արտացոլելով սուբյեկտի և միջավայրի դարավոր փոխազդեցության արդյունքը, ժառանգում է դիմագծեր, մի կողմից նախնիներից, մյուս կողմից՝ ձեռք են բերվում կյանքի ընթացքում: Վերջ ի վերջո դեմքը կենթարկվի հոգուն, և նրա արտահայտությունը կդառնա ճշմարիտ, երբ սուբյեկտն ու միջավայրը լիակատար ներդաշնակ կլինեն»[13]: Ըստ էության Ունամունոն առաջ է քաշում ներքին- արտաքին հարաբերության ներդաշնակության խնդիրը, որի համաձայն, մեկը մյուսով պատճառաբանված են: Եթե անտիկ դարաշրջանում ընդունելի և համադրելի էին գեղեցիկն և ճշմարիտը, գեղեցիկնըու բարին, ապա մեր օրերում մեկը մյուսից բաժանվել- հեռացել են:

«Դոն Կիխոտի դիմանկարը,- կարծում է Մ. Ունամունոն,- պետք է նկարել հավատալով նրա գոյությանը, բացահայտելով նրա նյութական գոյությունը հոգու միջոցով: Պետք է գրել Կիխոտի դիմապատկերը հավատալով, որ նա գոյություն ունի, ապրում և գործում է, ինչպես սրբերի և հրեշտակների գոյությանն են հավատացել նրանց պատկերող պրիմիտիվիստ նկարիչները»[14]: «Տխուր Պատկերի Ասպետի գոյությունը ռեալ է քանի որ իդեալական է, իրական է, քանի որ գործող է»[15], սա է Ունամունոյի էսսեի հիմնական առանցքը:

---

[13] Նույն տեղում, էջ 239:
[14] Նույն տեղում, էջ 242:
[15] Նույն տեղում, էջ 243: